ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<22>> 06 2018թ N 31

ք. Եղեգնաձոր

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ,ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ-ի մարտի 3-ի <<Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման,շահաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 202-Ն որոշման ենթակետի դրույթներով՝

**Որոշում եմ՝**

**1.,, Վայքի ԲԿ,, ՓԲԸ**

2017թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 920.9 հազ.դրամ,շահութահարկի նվազեցումից հետո՝736.8 հազ.դրամ:ՀՀ պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով,որը կազմում է 368.4 հազ.դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2018թ-ի հոկտեմբերի 1-ը:

**2.,,Ջերմուկի ԱԿ,, ՓԲԸ**

2017թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 210.0 հազ.դրամ,շահութահարկի նվազեցումից հետո՝ 171.0հազ.դրամ:ՀՀ պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով,որը կազմում է 85.5 հազ.դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2018թ-ի հոկտեմբերի 1-ը:

**Ա.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**